# Միջազգային փորձագիտական հանձնաժողովի անդամները պատմում են Արցախ կատարած իրենց այցի մասին

Այս տարվա ապրիլի վերջից ի վեր Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվել են 10 հազարից ավելի հայեր: Այդ մասին հուլիսի 17-ին Մոսկվայում, մամլո ասուլիսում հայտարարեցին Լեռնային Ղարաբաղ այցելած միջազգային փորձագիտական հանձնաժողովի անդամները, որը գլխավորում է բրիտանական պառլամենտի Լորդերի պալատի փոխնախագահ բարոնուհի Քերոլայն Քոքսը: Հանձնաժողովն ստեղծվել էր Ա. Սախարովի հիշատակին նվիրված «Խաղաղություն, առաջադիմություն, մարդու իրավունքներ» միջազգային 1-ին կոնգրեսի որոշմամբ: Առաջին անգամ նա Լեռնային Ղարաբաղում էր եղել 1991 թ. մայիսի 30-հունիսի 1-ը:

*«Մենք երեք օրով եղանք Ստեփանակերտում եւ մերձակա գյուղերում,- ասաց Ք. Քոքսը: -Ուսումնասիրեցինք վիճակը շրջանում եւ եկանք այն եզրակացության, որ եթե տեղահանությունը շարունակվի, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ նոր զինված բախումներն անխուսափելի կդառնան»:*

Փորձագիտական հանձնաժողովի անդամների կողմից ստորագրված հայտարարության մեջ նշվում են նոր բախումների չորս պոտենցիալ աղբյուրներ. բռնի տեղահանությունը, անհիմն ձերբակալություններն ու բանտարկությունները, խաղաղ բնակչության հետապնդումները եւ Ադրբեջանի օմոնի գործողությունները: Ըստ Ք. Քոքսի, ադրբեջանական իշխանությունները, ներառյալ հանրապետության նախագահը, արդարացնում են տեղահանությունը, հավաստելով, թե իբր մարդիկ մեկնում են կամավոր: *«Մենք հակառակ ապացույցներ ենք ստացել,- ասաց նա,- տեղի են ունեցել նաեւ սպանություններ, մարմնական վնասվածքներ, անձնական գույքի փչացումներ»:*

Ք. Քոքսը վրդովեցուցիչ համարեց ադրբեջանական բանտերում բանտարկյալներին պահելու պայմանները: «Նրանց արգելված է շփվել հարազատների եւ փաստաբանների հետ, նրանք ենթարկվում են ծեծի, մշտական ծարավի մեջ են, քանզի նրանց ջուր չեն տալիս եւ կերակրում են աղի ձավարով», ասաց նա:

Պատասխանելով «Ինտերֆաքսի» թղթակցի այն հարցին, թե տվյալ իրավիճակում ինչպիսի՞ն պիտի լինի Մոսկվայի դիրքը, բրիտանական պառլամենտի Լորդերի պալատի անդամ Մալքոլմ Փիրսոն ասաց, թե կենտրոնը չպետք է բռնի ոչ մեկ, ոչ մյուս կողմը:

■